

երկու. զի մնաց անդ ամիսս քսան եւ երկու. եւ յետոյ հազիւ ուրեմն զերծաւ նա» (Գ. 611—612) :

Պօղոս Պիրոմալլի դեռ երկար զեղերեցաւ Հայաստան եւ ունեցաւ արդիւնաւէտ գործունէութիւն թէ առաքելական եւ թէ զրական ասպարէզներու վրայ : Ուրիշ տեղոյ եւ ժամանակի կը թողում անդրադառնալ անոր կեանքի եւ գործունէութեան աւելի մանրագնին քննութեամբ :

37. ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ս. ԱԹՈՌԸ

Միութեան հարցին ժէ. դարու առաջին կէսին գործօն մասնակցութիւն բերին հայ վաճառականները : Իրենց առեւտրական շուկան ընդարձակելու եւ մրցակիցներու դէմ պաշտպանութիւն գտնելու համար կարեւոր համարեցան անոնք քրիստոնէայ Արեւելքի եւ Արեւմուտքի, յանուանէ Հայոց եւ Հռոմայ Եկեղեցիներու մէջ նկատուած խտիրը բարձուած տեսնել :

Հայ վաճառականները թէ Արեւելք եւ թէ Արեւմուտք, երբ եւրոպական իշխանութեանց հետ շփում կ'ունենային, կը հանդիպէին դժուարութիւններու : Սպանիացիք եւ Փորթուգալցիք, որոնք Պարսից Մոցին եւ Արեւմտեան Հնդկաստանի ծովեղերքին տիրացած էին, կը վարուէին հայ վաճառականներու հետ այնպէս ինչպէս Մահմեդականներու հետ : Ոչ միայն կենցաղով, լեզուով եւ հանդերձանքով ունէին անոնք նմանութիւն ոչ-քրիստոնէայ